



## Արեւմտահայերէնի ամառնային դաստիարակչական աշխատանոց

Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան Զայկական համայնքներու բաժանմունքը համախմբեց տարբեր երկիրներէ երեսունութ հոգի, բոլորն ալ ծանօթ անձնաւորութիւններ իրենց մասնագիտութեան՝ դաստիարակչութեան եւ գեղարուեստական ստեղծարարութեան կալուածներուն մէջ: Զետապնդուած նպատակն էր միասնաբար ծաւալել արեւմտահայերէնի իւրացման ու վերաշխուժացման ուղղուած գործիքներ: Այս մէկը երկրորդ աշխատանոցն էր իր տեսակին մէջ (առաջինը կազմակերպուած էր 2016 Օգոստոսին, Փորթուկալ) որ տեղի ունեցաւ Յուլիս 9-էն 16, Ֆրանսայի Պուրպուլ համայնքին մէջ:

Անցեալ տարի, առաջին աշխատանոցը ծնունդ տուաւ եօթը խումբերու, կազմուած՝ մասնագիտացած դաստիարակներէ, համալսարանականներէ, գրողներէ, երաժշտագետներէ, արուեստագետներէ, դերասաններէ, որոնք իրենց կողքին ունէին տեղեկատուական գիտութեանց մասնագետներ: Այս տարի եւս կազմուեցան նմանօրինակ խումբեր, որոնցմէ իւրաքանչիւրը ներկայացուց առանձին գեկոյց մը իր գործունէութեան յառաջացման մասին, միաժամանակ շարունակելով ծաւալել նախապէս ճշդուած գաղափարները:

Զետեւեալներն են այդ եօթը նախաձեռնութիւնները.-

1. Դաստիարակներու համար համալսարանական շարունակական ծրագրի մը կազմակերպումը, զուգակցուած՝Սփիւռքի երախաներուն յատուկ ճամբարով մը: Այս աշխատանքին արգասիքը հանդիսացաւ «Չարմանազան» ճամբարը, որ տեղի ունեցաւ Պուրպուլի մէջ, 2017 Յուլիս 17-էն Օգոստոս 11:

2. Արեւմտահայերէնի պատշաճեցուած՝ գրելու եւ կարդալու արդիական եղանակներու վրայ հիմնուած մանկավարժական գործիքներու, ինչպէս նաեւ հաստատեալ եւ ոչ-հաստատեալ (formel եւ informel) համագրերու (contextes) համար դասընթացի մը պատրաստութիւնը: Այս խումբը այժմ կը կեդրոնանայ ճկուն դասընթացի ծրագրի մը եւ տարբեր տեսակի մանկավարժական գործիքներու ստեղծման վրայ: Յաւելեալ՝ յատուկ դաստիարակչութեան մասնագետներու ենթայանձնախումբ մը կեանքի կոչեց արեւմտահայերէնի պատշաճեցուած «հնչիւնաբանական գիտակցութեան» ծրագիր մը, լեզուի թերախօսութեան մասնագետներու (orthophonistes) ու դաստիարակներու այդ ուղղութեամբ աշխատանքը խրախուսելու, ինչպէս նաեւ անոնց աշխատանքին աջակցելու նպատակով:

3. Վարժարաններու ներկայի ու ապագայի տնօրէնները համախմբող բանավայրի (forum) մը կազմակերպումը: Ան պիտի կեդրոնանայ դաստիարակչական դեկավարութեան մը ստեղծման հարցին վրայ: Զոն պիտի վիճարկուին



դպրոցական մշակույթի, ծրագրերու բարեփոխումներու նման հարցեր, ինչպես նաեւ մասնակիցները պիտի կարենան բաժնել իրենց ներկայի աշխատածեւը, փորձառութիւնները: Վարժարաններու տնօրէններուն յատուկ այս առաջին գիտաժողովը տեղի պիտի ունենայ 2018 Յունուարին, Գալիֆորնիոյ համալսարանին մէջ, Լոս Անճըլըս:

4. Որքան երախաներու, նոյնքան ալ երիտասարդ չափահասներու համար՝ լեզուի իւրացման եւ գործածութեան բարելաւման ուղղուած խաղերու ստեղծումն ու պատշաճեցումը: Այդ խաղերէն ոմանք պիտի կապուին նաեւ ընկերային ցանցերու որոշ հարթակներու: Նոր, թէ աւանդական խաղերու ցուցադրութիւններ արձանագրուեցան եւ նկարահանուեցան: Զանի մը ամիսէն համացանցի վրայ պիտի դրուին կարճ տեսանիւթեր եւ թատերական դրուագներ:

5. Երաժշտական ծրագրի մը ստեղծումը, ուր լեզուն ու երգը պիտի միահիւսուին: Առաջին արտադրութիւնը խտասալիկ մըն է, որ կը կոչուի «Տարոսիկ». անոր կ'ընկերանայ խաղ մը: Արդէն արձանագրուած է եւ ի մօտոյ հրապարակ պիտի ելլէ: Երկրորդ խտասալիկի մը պատրաստութեան աշխատանքներն ալ ընթացքի մէջ են:

6. Տարիքի տարբեր խաւերու համար՝ պատանեկան գրականութեան տարբեր լեզուներով գործերու արեւմտահայերէնի թարգմանութիւնը: Այս նախաձեռնութեան նպատակն է վաթսուն գիրքի հրատարակութիւնը՝ երեք տարուան ընթացքին: Գիրքերու ընտրութիւնը արդէն կատարուած է եւ խումբը այժմ կ'աշխատի թարգմանութեան եւ հրատարակութեան գործերով զբաղելիք կառոյցին ստեղծման գծով:

7. Համացանցային կայքէջի մը ստեղծումը, որ թոյլ պիտի տայ վերոնշեալ տուեալներն ու գործիքները բաժնել հանրութեան հետ, այդպէսով՝ ապահովելով նաեւ Սփիւռքի մշակութային դերակատարներուն միջեւ հաղորդակցութեան միջոց մը: Ներկայիս, կայքէջը պատրաստութեան ընթացքի մէջ կը գտնուի եւ բացումը կը նախատեսուի 2018-ի տարեմուտին:

\*\*\*

Նաեւ հարկ է նշել, որ այսքան ստուար ծրագրի մը շրջանակին մէջ, որ ի մի կը բերէ աշխարհի չորս ծագերէն մասնակիցներ, որոնցմէ իւրաքանչիւրը արդէն բոլորովին նուիրուած է իր մասնագիտութեան եւ ծանրաբեռնուած՝ իր պատասխանատուութիւններով, միացեալ նպատակի մը ճանաչումն ու գիտակցութիւնն է, որոնք կը հանդիսանան գործին մղիչ ուժը, թոյլ տալով՝ այսքան տարատեսակ խումբի մը ներդաշնակ կերպով յառաջանալը:

Յառաջիկայ տարուան ընթացքին մասնակիցները եւ ուրիշ մասնագետներ պիտի



շարունակեն այս եօթը նախաձեռնութիւններու զարգացումը եւ գործադրութիւնը:

Հայկական համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեան ներկայ գտնուեցաւ ամառնային աշխատանոցի փակման նիստին: Շնորհակալութիւն յայտնեց մասնակիցներուն, արեւմտահայերէնի վերաշխուժացման եւ եղանակներու արդիականացման ի ինդիր այս գործընթացին մէջ իրենց տարած աշխատանքին եւ գործադրած ջանքերուն համար: “Արդէն կը ստանանք արդիւնքները”, ըսաւ ան, աւելցնելով. “Բոլորս մաս կը կազմենք շարժումի մը, որու նպատակն է ապագային ապահովել հայերէնի ծաղկումը որպէս թնդացող լեզու”:

Ամառնային դաստիարակչական աշխատանոցը կազմակերպուած եւ համակարգուած էր Անի Կարմիրեանի կողմէ, որ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքին մէջ Արեւմտահայերէնի վերաշխուժացման ծրագրերու պատասխանատունն է: